

ՀԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԴԻՄՔԵՐԸ

Յուրաքանչյուր պետություն իր գործառնություններն իրականացնելու, պետության և հասարակության առջև ծառացած խնդիրները լուծելու համար պետք է տնօրինի համապատասխան ֆինանսական միջոցների, որոնք տարբեր հասարակարգերում հավաքագրվել են տարբեր եղանակներով և մեթոդներով: Գրեթե բոլոր ժամանակաշրջաններում էլ այդ միջոցների հավաքագրման հիմնական աղբյուրը եղել և մնում են հարկերը, որոնցում մարմնավորվում է պետության տնտեսապես արտահայտված գոյությունը: Չնայած այն հանգամանքին, որ հարկերն ամենից հաճախ են ենթարկվում քննադատության, այնուամենայնիվ, ինչպես Բ. Ֆրանկլինն է նշել դեռ շատ վաղուց. «Այս աշխարհում բացի մահից ու հարկերից ուրիշ ոչ մի հաստատուն բան չկա»¹: Միանշանակ է, որ առանց հարկերի և կայուն հարկային համակարգի չի կարող գոյատևել ոչ մի պետություն:

Հարկը կարևոր դեր է խաղացել մարդու կյանքում դեռևս հնագույն ժամանակներից: Հարկերի մասին առաջին հիշատակումներն արվել են դեռևս անտիկ մտածողների փիլիսոփայական աշխատություններում, որոնք հարկերը համարել են հասարակական բարիք և հասարակայնությունն անհրաժեշտ ու օգտակար երևույթ:

Հայտնի են «հարկ» հասկացության տարբեր բնորոշումներ: Օրինակ՝ «գերմանացի գիտնականները հարկերը դիտել են որպես պետությանը իր քաղաքացիների կողմից ցույց տրվող օգնություն (պաշտպանություն), Անգլիայում հարկերը մինչև հիմա կրում են պարտք (պարտավորություն) անվանումը, ԱՄՆ-ի օրենսդրությունը հարկը սահմանում է որպես tax (տաքս), Ֆրանսիայում հարկի մասին օրենսդրությունը հարկային հարաբերությունները սահմանում է որպես import (պարտադիր վճար) և այլն»²: Ժամանակակից գրականության մեջ հարկերը դիտարկվում են որպես օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և այլ մակարդակի բյուջեներ՝ պարտադիր, անվերադարձ, համապատասխան ժամկետներում և դրույքաչափերով գանձվող վճարներ:

Չնայած, որ հարկերը իրենց գոյության հենց սկզբից էլ եղել են դասակարգային և խմբային շահերի, սոցիալական ուժերի, նրանց պայքարի ու փոխզիջումների ամենավառ դրսևորումներից մեկը, սակայն դեռևս ոչ մի տնտեսագիտական դպրոցի կամ ուղղության կողմից չի ժխտվել հարկերի դերը պետության գոյատևման գործում: Տնտեսագիտության մեջ հայտնի են հարկային մի շարք տեսություններ, որոնք վկայում են, որ հարկմանն առնչվող խնդիրները երբեք չեն անտեսվել տնտեսագիտական ոչ մի դպրոցի կամ ուղղության կողմից, իսկ արդարացի հարկազանձման սկզբունքների որոնումը միշտ էլ եղել է տնտեսագետների վիճահարույց հարցերից մեկը:

Տարբեր հարկային տեսություններ հարկերին տվել են տարբեր սահմանումներ՝ ձգտելով հիմնավորել դրանց գոյությունը: Ամենավաղ հարկային տեսություններից մեկում՝ շահի (օգուտի) տեսության մեջ՝ հարկը քաղաքացիներից պետության գործառնությունների կատարման համար գանձվող վճար է:

XVII–XVIII դարերում ատոմիստական հարկային տեսության ներկայացուցիչներ Վոբանը, Մոնտեսքյենը հարկը համարում էին քաղաքացիների կողմից կատարվող վճար պետության կողմից նրանց պաշտպանության և այլ ծառայությունների համար: Ըստ այս մոտեցման՝ պետության հիմքում ընկած է պայմանագիր (համաձայնություն) նրա և իր քաղաքացիների միջև, որի հիման վրա էլ հավաքվում են հարկերը: Հարկերի՝ որպես վերարտադրության կարևորագույն

¹ Финансы. Учебник. Изд. Второе/ Под Ред. проф. В.В. Ковалева.-М., 2003, ст. 71.

² Юткина Т. Ф. Налоги и налогообложение: Учебник.- М.: ИНФРА-М, 1998, ст. 14.

գործոնի վերլուծությանն են վերաբերվում նաև XVIII դարի ռուս և արտասահմանյան տնտեսագետներ Է. Մաքսի, Ժ. Բ. Սեյի, Վ. Տ. Պոստոլովի աշխատությունները, որոնց գաղափարները հետագայում զարգացրել են Ն. Ի. Տուրգենևը, Վ. Ն. Տվերդոսլավեովը, Ի. Խ. Օգերովը և ուրիշներ:

Բավականության տեսության ներկայացուցիչ Ժ. Միսմոնդին իր «Քաղաքատնտեսության մոլ սկիզբը» (1819թ.) աշխատության մեջ գրել է. «Հարկերի օգնությամբ յուրաքանչյուր վճարող գնում է ոչ այլ ինչ, քան բավականություն: Բավականությունն մա ստանում է հասարակական կարգի պահպանումից, անձի և սեփականության պաշտպանությունից և այլն»¹:

Հարկի էության ուսումնասիրմամբ են զբաղվել նաև XX դարի 20-ական թվականների ռուս տնտեսագետներ, կոլեկտիվ պահանջումքների տեսության ներկայացուցիչներ Ա. Տրիվուսը, Ա. Սոկոլովը, Մ. Սոբոլևը, որոնց բազմաթիվ առաջարկություններ և ենթադրություններ օգտագործվել են առանձին ֆինանսական բարեփոխումների ժամանակ: Ա. Տրիվուսը գտնում էր, որ «Հարկը վճարողից որոշակի քանակությամբ նյութական բարիքների հարկադիր գանձում է՝ առանց համապատասխան համարժեքի», իսկ «որոշ դեպքերում համարժեք են այն ծառայությունները, որոնք վճարողին մատուցում է պետական իշխանությունը»²:

Ժամանակակից գիտնականները նույնպես նշում են, որ հարկը քաղաքացիների կողմից կատարվող ինքնատիպ վճար է՝ պետության կողմից նրանց մատուցվող ծառայությունների դիմաց: Այսպես, Լ. Յակոբսոնը գտնում է, որ «Հարկը պետության վրա կատարվող ծախսերի ձև է»³: Ինչպես տեսնում ենք, հարկերը ենթարկվել են տևական էվոլյուցիայի՝ տարբեր ժամանակներում ստանալով տարբեր դրսևորումներ, սակայն անփոփոխ է մնացել «հարկ» հասկացության տնտեսական բովանդակությունը՝ պետությանն անհրաժեշտ ֆինանսական միջոցների հավաքագրումը և հասարակության մասշտաբով եկամուտների մի մասի վերաբաշխումը: Եվ ինչպես Կ. Մարքսն է գրել. «Հարկը կառավարման մեքենայի տնտեսական հիմքն է»⁴:

Հարկման հիմքում մշտապես ընկած են եղել որոշակի սկզբունքներ, որոնք պահպանվել են դեռևս Հռոմեական կայսրությունում: Այսպես, կայսր Տիրայանոսը հաճախ էր կրկնում. «Լավ հովիվը պետք է խուզի իր ոչխարին և ոչ թե մորթի նրան»: Հարկերի օգտագործման հիմնական սկզբունքն է՝ հարկերն օգտագործել հասարակության զարգացման համար և նրա շահերի շրջանակներում, բայց ոչ ի վնաս հասարակության և տնտեսական զարգացման: Հարկերի անհրաժեշտությունը և հարկադրման հիմնական սկզբունքները ձևակերպվել են դեռևս XVI դարում դասական տնտեսագետների կողմից: Հարկման դասական տեսության սկիզբը դրվել է Ա.Սմիթի, Ֆ.Բենեթի, Ու.Պետտիի, Ժ.Սեյի, Դ.Ռիկարդոյի, Ջ.Միլի աշխատություններում, որոնք տնտեսությունը համարում էին կայուն և ինքնակարգավորվող համակարգ, որտեղ պահանջարկը ծնում է առաջարկ, իսկ հարկերը խաղում են միայն պետության բյուջեի եկամտային աղբյուրի դեր, և դրանք չպետք է ծանրություն լինեն քաղաքացիների համար: Տնտեսության մեջ հարկերի դերի մասին դասական պատկերացումները տրվել են շոտլանդացի տնտեսագետ և փիլիսոփա Ա.Սմիթի (1723-1790թթ.) աշխատություններում, որոնք դրել են հարկման գիտական տեսության՝ տնտեսագիտության կարևորագույն կիրառական ճյուղի ձևավորման հիմքը: Իր «Հետազոտություններ ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» (1776թ.) աշխատության մեջ Սմիթը հարկերը բնորոշեց որպես ինքնուրույն տնտեսավարող սուբյեկտների եկամուտների մի մասի քիչ թե շատ կանոնակարգված և սխառնատիկ գանձում և առաջին անգամ բացառիկ պարգույթամբ ու կոնկրետությամբ ձևակերպեց հարկման չորս հիմնական սկզբունքները՝ ա) արդարության սկզբունքը, բ) որոշակիության սկզբունքը, գ) հարմարության սկզբունքը և դ) տնտեսման սկզբունքը, որոնք որոշակիորեն կատարելագործված օգտագործվում են նաև մեր ժամանակներում: Այս սկզբունքները «Հանդիսանում են կարծես թե երաժշտական քերականութ-

¹ «Финансы и кредит» 14 (104) -2002, июль, ст. 63.

² «Финансы и кредит» 14 (104) -2002, июль, ст. 63.

³ Տե՛ս նույն տեղում, էջ 63:

⁴ Տե՛ս Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 19, էջ 29:

յան նոտաների ընտանիք, որոնք գոյություն են ունեցել անհիշելի ժամանակներից, սակայն այդ նոտաների օգնությամբ գրվել են գլոխգործոցներ և կակոֆոնիաներ (խառնադմուկ): Այս իդեալական սկզբունքները կարելի է համեմատել մասնատվածաշյան տաս կանոնների հետ, որոնցով առաջնորդվելով պետք է ապրի յուրաքանչյուր մարդ»¹: Ցանկացած արդյունավետ հարկային համակարգ պետք է բավարարի վերը նշված սկզբունքներին, հետևաբար հարկի ցանկացած ժամանակակից տեսակ նույնպես պետք է բավարարի հետևյալ պահանջները՝ որոշակիություն, արդյունավետություն և արդարություն: Արդյունավետության պահանջը Ա.Սմիթի աշխատությունում նրա երրորդ և չորրորդ սկզբունքն է, որը այժմ ձևակերպվում է այլ կերպ. մախ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հարկատուի այն ծախսերին, որոնք կապված են հարկային հաշվառման անցկացման և հարկային հաշվետվությունների ներկայացման հետ: Պարզ է, որ Սմիթի ժամանակներում այս ծախսերը շատ չնչին էին, այնինչ ժամանակակից հարկային համակարգի պայմաններում այս խնդիրների իրականացման հետ կապված քաղաքացիների ու ձեռնարկությունների ծախսերը շատ մեծ են և հաճախ կասնում են վճարվելիք հարկի մեծության գումարին: Երկրորդ, անհրաժեշտ է հաշվի առնել մասնական հարկային մարմինների անընդհատ աճող ծախսերը՝ կապված հարկային օրենսդրության բարդացման, հարկային վերահսկողության ապահովման (հարկային դրույքների աճին գուգահեռ պետք է ուժեղացնել և խստացնել հարկային վերահսկողությունը), հարկային մարմիններում աշխատողների թվաքանակի մեծացման և նրանց նորագույն տեխնիկական սարքավորումներով ապահովման հետ: Սմիթի մոտ հարկազանձման «արդարության» սկզբունքը նշանակում էր հարկային բեռի հավասար բաշխում բոլոր հարկատուների միջև, նրա ծառայությունն այն էր, որ մտցրեց հարկման համամասնություն՝ «Շատ ստացողը պետք է մասնաշաղկապված լինի շատ վճարի»²: Սմիթի հարկային տեսության հիմքում ընկած է հարկերի՝ ըստ ստացված եկամուտների որոշման սկզբունքը, որը գերիշխող է աշխարհի գրեթե բոլոր երկրներում, քանի որ, ի տարբերություն հարկազանձման այլ հայեցակարգերի, ըստ որոնց՝ հարկերի չափը պետք է սահմանվի քաղաքացիների կողմից պետությունից ստացած օգուտներին համամասնորեն, որի կիրառումը գործնականում շատ դժվար է, այս սկզբունքը ավելի կիրառելի է: Ուստի պատահական չէ, որ Սմիթի կողմից ձևակերպված սկզբունքների հիման վրա ձևավորվել են հարկադրման երկու տեսությունները: Առաջինը «ըստ ստացված օգուտների» հարկման տեսությունն է, որի համաձայն բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձինք պետք է հարկ վճարեն պետության կառավարական ծրագրերից իրենց ստացած օգուտներին համամասնորեն: Այս սկզբունքի կիրառման հետ կապված հիմնական դժվարությունն այն է, որ ուղղակի անհնար է ստույգ որոշել, թե յուրաքանչյուր հարկատու որքան անձնական օգուտ է ստանում առողջապահության, պաշտպանության, լուսավորության գծով կատարվող ծախսերից: Երկրորդ տեսության էությունը «ըստ վճարումնականության» հարկման սկզբունքն է, այսինքն՝ վճարվելիք հարկի գումարը պետք է անմիջական կախվածության մեջ դրվի հարկատուի ստացած եկամտից: Խոսքն այստեղ հարկման պրոգրեսիվ սկզբունքի մասին է, որը բնորոշվում է դեպի վճարումնակ անձինք հարկային բեռի բեռնացմամբ, քանզի, ինչպես Վ.Ի.Լենինն է գրել. «Որքան աղքատ է մարդը, այնքան մա իր եկամտից ավելի շատ բաժին է տալիս պետությանը»²: «Վճարումնականության» սկզբունքով հարկման մախապայմանը հորիզոնական արդարության սկզբունքի պահպանումն է, այսինքն՝ նույն պայմաններում գտնվող հարկատուների նկատմամբ պետք է կիրառվեն հարկման նույնական մոտեցումներ: Բազմաթիվ երկրների հարկային համակարգերի ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում, համաձայն «վճարումնականության» հարկման, գրեթե բոլոր դեպքերում մախապատվությունը տրվում է ուղղահայաց արդարության սկզբունքին, այսինքն՝ ավելի շատ հարկեր պետք է վճարեն այն անձինք, ովքեր մինչև հարկումը գտնվում են ավելի բարեկեցիկ պայմաններում: Այս սկզբունքի կիրառության դեպքում սահմանվող հարկա-

¹ Юткина Т. Ф. Налоги и налогообложение: Учебник. - М.: ИНФРА-М, 1998, ст. 32.

² Ленин В. И. "Полн. Собр. Соч." - Т.6, ст.262.

տեսակներին բնորոշ են աճողական դրույքաչափերը, այստեղ խնդիրն այն է, թե ինչ չափանիշներով պետք է տարբերակել անձանց խմբերը: Ըստ էության, հարկերը կարող են լինել կամ պրոգրեսիվ, երբ հարկման ծանրությունն աճում է ավելի խոշոր եկամուտների և ունեցվածքի համար, կամ ռեգրեսիվ, երբ իրենց հիմնական ծանրությամբ հարկերն ընկնում են ավելի փոքր եկամուտներ ունեցողների վրա:

Ամերիկյան տնտեսագետ Պ.Սամուելսոնը իր «Տնտեսագիտություն» գրքում արդյունավետ հարկման հիմքում ընկած բազմաթիվ սկզբունքներից առանձնացնում է ըստ ստացված օգուտների և վճարումնականության սկզբունքը: Նա գտնում է, որ «Հարկերի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ եկամուտները շուկայական համակարգի միջոցով և համապատասխան ձևով բաշխվեն ի շահ հասարակության»¹: Քանի որ, «ըստ վճարումնականության» հարկման սկզբունքի կիրառման ժամանակ առկա է այն խնդիրը, որ չկա հարկեր վճարելու որևէ մեկի հնարավորությունները չափող գիտական մոտեցում, ուստի այդ մասին Սամուելսոնը գրում է. «Պրակտիկայում այս հարցի պատասխանը կառուցվում է կանխատեսումների և գուշակումների վրա՝ կախված հարկման հիմնախնդրի նկատմամբ դեկավարող կուսակցության հայացքներից, պահի և եկամուտների նկատմամբ կառավարության պահանջներից»²: Հարկման վերը նշված երկու տեսություններն ընկած են գրեթե բոլոր երկրներում իրականացվող հարկային քաղաքականությունների հիմքում:

Ինչևիցե, հարկային համակարգերի վերաբերյալ տարբեր ժամանակաշրջանների տնտեսագետների ուսումնասիրություններից երևում է, որ հարկերի՝ որպես տնտեսական կատեգորիայի օբյեկտիվ գոյության ու անհրաժեշտության հարցում բոլորը համախոհներ են, տարաձայնությունները վերաբերել են միայն տնտեսության մեջ հարկերի ունեցած դերին, իսկ արդարացի հարկազանձման սկզբունքների որոնումը երբեք չի դադարել հրատապ լինելուց:

ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԳԵՈՒԴԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ցանկացած երկրի տնտեսական զարգացման գործընթացում իր ուրույն տեղն ունի գյուղատնտեսությունն իր բոլոր ենթակառուցվածքներով: Գյուղատնտեսությունը և առհասարակ ագրոպարենային համալիրը (ԱՊՀ) ցանկացած պետության տնտեսության ռազմավարական ճյուղերից մեկն է, և այստեղ կան մի շարք առանձնահատկություններ, որոնք հատուկ ուշադրության են արժանի այս ոլորտի վարկավորման համակարգն ուսումնասիրելու համար: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության պարագայում, երբ «...սկսած ԽՍՀՄ ժամանակներից՝ ագրոքիզնետը և ագրոարդյունաբերությունը եղել են Հայաստանի տնտեսության կարևորագույն ու արդյունավետ ճյուղերից: Նրանք այսօր նույնպես նպաստում են գյուղական բնակչության զբաղվածությանը ու աղքատի են հանդիսանում գյուղական տարածքներում եկամուտների ապահովման համար...»³: Ներկայումս ՀՀ գյուղատնտեսությունը հիմնարար նշանակություն ունի երկրի ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում, և այս հանգամանքն առավել նկատելի է

¹ Самуелсон П. Экономика, МГП. АЛГОН ВНИИСИ 1992, Т.1, стр.166.

² Макконел К., Брю С. Экономикс, принципы, проблемы и политика, М. Республика, 1992г, стр.65.

³ "Agribusiness and Agro-industry in Armenia" Andranik Petrosyan, "Enabling Environments for Agribusiness and Agro-industry Development in Eastern Europe and Central Asia" proceedings of FAO Workshop, Rome, Italy, 2006, p. 113.